



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

06.10.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/57

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.09.2017թ. թիվ 03/26-3/16947-17 գրությամբ «Թերմոշինթել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 12.09.2017թ. թիվ 01/61-18643 գրության հիման վրա, 20.09.2017թ. թիվ 03/26-3/16947-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Թերմոշինթել» ՍՊԸ-ին (այսուհետ

նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Թերմոշինթել» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Թերմոշինթել» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված 26.09.2017թ. գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/15» ծածկագրով բաց մրցույթին 29.08.2017թ. «Թերմոշինթել» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել:

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/15» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ գնահատող հանձնաժողով) 31.08.2017թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ 3-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Թերմոշինթել» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովը 31.08.2017թ-ին հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ: Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 04.09.2017թ-ին տրամադրվել է եզրակացության, համաձայն որի՝ «Թերմոշինթել» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 3391 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն:

Գնահատող հանձնաժողովը 04.09.2017թ.-ին ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է մեկ նախատանքնային օրով կասեցնել նիստը և ծանուցել «Թերմոշինթել» ՍՊԸ-ին՝ առաջարկելով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովը 04.09.2017թ. «Թերմոշինթել» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին ուղղված էլեկտրոնային ծանուցմամբ տեղեկացրել է հետևյալը. «Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/15» ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատելու ժամանակ

«Թերմոշինթել» ՍՊԸ-ի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունում Ընկերության՝ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը կազմում է 3391 (երեք հազար երեք հարյուր իննսունմեկ) ՀՀ դրամ: ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետի համաձայն, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև 05.09.2017 թվականը ներառյալ շտկել անհամապատասխանությունը: Մինչև նշված ժամկետի ավարտը անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:»:

06.09.2017թ-ին ժամը 10:00-ին տեղի ունեցած գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 6 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «Թերմոշինթել» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ այն հիմնավորմամբ, որ «Թերմոշինթել» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը և 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Հազարաշեն» ՍՊԸ-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

* ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում

հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 8-րդ գլխով սահմանված են գնումներին մասնակցելու իրավունքը (մասնակցության իրավունք) և որակավորման չափանիշները գնահատելու պայմանները:

Կարգի վերոհիշյալ գլխի 59-րդ կետի համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված «Մասնակցության իրավունքը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ եթե մասնակիցը հայտով ներկայացրել է օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին:

Կարգի 63-րդ կետի համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Վերոհիշյալից ուղղակիորեն բխում է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություն չունենալը վերաբերում է մասնակցի մասնակցության իրավունքին, մինչդեռ մասնակցի կողմից հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու

տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս չլինելը և հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքը չգերազանցելը վերաբերում է մասնակցի որակավորմանը, այսինքն հանդիսանում է «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշ:

Միևնույն ժամանակ, ըստ Կարգի 47-րդ կետի, մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանության շտկումը վերաբերում է միայն կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերին, այլ ոչ թե մասնակցության իրավունք հանդիսացող ժամկետանց հարկային պարտավորության բացակայությանը:

Սակայն գնահատող հանձնաժողովը մասնակցի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն ունենալը դիտարկել է ոչ թե որպես մասնակցության իրավունք, այլ որակավորման չափանիշ, և ոչ իրավաչափ կիրառել Կարգի 47-րդ կետը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընկերությունը գտնում է, որ տվյալ իրավիճակում գնահատող հանձնաժողովի կողմից պետք է կիրառվեր ոչ թե Կարգի 47-րդ կետը, այլ կարգի 45-րդ կետը, որի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խրոհրդին: Սույն կարգի 44-րդ կետով տահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում

էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 44-րդ կետից ուղղակիորեն բխում է, որ եթե ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացրած տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվել էր իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը պետք է մերժվեր՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից, ուստիև ժամկետանց հարկային պարտավորության առկայության փաստը գնահատող հանձնաժողովի կողմից շտկման ենթակա հանգամանք դիտարկվել չէր կարող: Ուստի որպես «հետևանք» «Թերմոշինթել» ՍՊԸ-ի վրա գնահատող հանձնաժողովի կողմից, Կարգի 47-րդ կետի հիմքով, չէր կարող դրվել արձանագրված անհամապատասխանությունը շտկելու պարտավորություն:

Բացի այդ, «Թերմոշինթել» ՍՊԸ-ն կատարել է պատվիրատուի կողմից հանձնարարված շտկումը:

Մասնավորապես, «Թերմոշինթել» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այսինքն 05.09.2017թ. ժամը 15:21-ին էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե է ներկայացրել շրջանառության հարկի վերաբերյալ ճշգրտված հաշվետվություն, որի արդյունքում ընկերության մոտ առկա 3391 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունը գրոյացվել է (կից ներկայացվում է ճշգրտված հաշվետվություն ներկայացնելու փաստը հաստատող ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի համապատասխան էլեկտրոնային ծանուցումը):

Սակայն քանի որ գնահատող հանձնաժողովը «Թերմոշինթել» ՍՊԸ-ից չի պահանջել ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկանք առ այն, որ Ընկերությունը այլևս չունի ժամկետանց հարկային պարտավորություն, ուստի և Ընկերությունը սահմանափակվել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ճշգրտված հաշվետվություն ներկայացնելով և առկա ժամկետանց պարտքը գրոյացնելով:

Ընկերությունը հայտնել է նաև, որ 25.09.2017թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՎՍ վարչության թիվ 19 բաժնի կողմից N523 տեղեկանքի (կցվում է) համաձայն՝ «Թերմոշինթել» ՍՊԸ-ն 30.08.2017թ.-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորություններ չունի:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը գտնում է, որ «Թերմոշինթել» ՍՊԸ-ն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ուստի Ընկերությունը խնդրել է «Թերմոշինթել» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

• Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 26.09.2017թ. ժամը 10:30-ի և 29.09.2017թ. ժամը 10:30-ի նիստերի վերաբերյալ, 29.09.2017թ. ժամը 10:30-ի նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 12.09.2017թ. թիվ 01/61-18643 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/15» ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Թերմոշինթել» ՍՊԸ-ն:

31.08.2017թ. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 1-ին և 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցիների մասով հարցում է կատարվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

01.09.2017թ. ստացվել է պատասխան, համաձայն որի Ընկերության հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը կազմում է 3391 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Կարգի 44-րդ կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով՝ գնահատող հանձնաժողովն Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 26.09.2017թ. ժամը 10:30-ի և 29.09.2017թ. ժամը 10:30-ի նիստերի վերաբերյալ, 29.09.2017թ. ժամը 10:30-ի նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2017/57 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/57 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար նաշագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության

եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/15» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների 29.08.2017թ. հայտ է ներկայացրել «Թերմոշինթել» ՍՊԸ-ն:

2. «Թերմոշինթել» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընկերությունը բավարարում է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/15» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Ընթացակարգի 1-4-րդ չափաբաժինների մասով, որը կազմել է 1-ին չափաբաժնի համար՝ 250 000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի համար՝ 200 000 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի համար՝ 200 000 ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժնի համար 200 000 ՀՀ դրամ:

4. Համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով 01.09.2017թ. տրամադրված եզրակացության՝ «Թերմոշինթել» ՍՊԸ-ն 29.08.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 3391 ՀՀ դրամի չափով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.09.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացրած որոշմամբ «Թերմոշինթել» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.09.2017թ. թիվ 03/26-3/16947-17 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 12.09.2017թ. թիվ 01/61-18643 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով

նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն մասի 6-րդ կետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհուրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

* «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը

էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար նաշագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով

կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/15» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների 29.08.2017թ. հայտ է ներկայացրել «Թերմոշինթել» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Ընթացակարգի 1-4-րդ չափաբաժինների մասով, որը կազմել է 1-ին չափաբաժնի համար՝ 250 000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի համար՝ 200 000 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի համար՝ 200 000 ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժնի համար 200 000 ՀՀ դրամ:

«Թերմոշինթել» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընկերությունը բավարարում է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/15» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով 01.09.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Թերմոշինթել» ՍՊԸ-ն 29.08.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 3391 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:

Հետևաբար Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասով, չի համապատասխանում իրականությանը (կեղծ տվյալ):

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ գնումներին մասնակցելու իրավունք չունեն նաև այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նույն կետի 2-րդ պարբերությունը հստակ սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, դրանք են՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

«Թերմոշինթել» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ բավարարում է մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, որը ժամկետանց հարկային պարտավորությունների մասով հետագայում ստուգվել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե համապատասխան հարցում ներկայացնելով: Արդյունքում արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված վերը նշված հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը (կեղծ տվյալ), այլ կերպ ասած առկա է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը, որի պարագայում Ընկերությունը չի կարող մասնակցել գնումների գործընթացին: Միևնույն ժամանակ համապատասխան հայտարարությունն իրականությանը չհամապատասխանող գնահատվելու դեպքում չի կարող արձանագրվել մասնակցի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որևէ հիմքի առկայություն, քանի որ մասնակիցը տվյալ դեպքում ի սկզբանե գնման գործընթացի շրջանակում չի ստանձնել որևէ պարտավորություն, որը խախտվել է, կամ թույլ չի տվել պայմանագրով նախատեսված որևէ պարտավորության խախտում, կամ չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից, ինչպես նաև չի հրաժարվել պայմանագիր կնքելուց: Այլ ներկայացրել է հայտարարություն, որը ստուգվել է նահանգնական կարգով և որի՝ իրականությանը չհամապատասխանելու հանգամանքը հիմք է հայտը մերժելու, այլ ոչ թե Ցուցակում ներառելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետը սահմանում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, **իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է,**

ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Գնման գործընթացին մասնակցելը, որը սկսվում է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու պահից, **հանդիսանում է մասնակցի իրավունքը**: Միևնույն ժամանակ մասնակիցը գնման գործընթացի շրջանակներում ստանձնում է որոշակի պարտականություններ, որոնք ծագում են որոշակի փուլից հետո, մասնավորապես՝ ընթացակարգի արդյունքներով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ճանաչվելուց հետո: Մինչև առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ճանաչվելը, մասնակցի կողմից իրականացվող գործողություններն ուղղված են գնումների ընթացակարգին մասնակցության իրավունքի իրացմանը, որի շրջանակներում մասնակիցը դեռևս որևէ պարտավորություն չի ստանձնում:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու փաստը, որի հետևանքով Ընկերության կողմից ներկայացված հայտարարությունը որակվել է որպես իրականությանը չհամապատասխանող (կեղծ տվյալ), համաձայն Օրենքի վերը նշված հոդվածի, չի հանդիսանում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք, Խորհուրդը գտնում է, որ «Թերմոշինթել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.09.2017թ. թիվ 03/26-3/16947-17 գրությամբ «Թերմոշինթել» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03017274) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ